ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 4.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի պատասխանատուի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (քաղաքի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***2016 թվականի դեկտեմբերի 14-ին*** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի պատասխանատուի ընտրության համար անցկացնել Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի փաստաբանների ժողով (**այսուհետ՝ ժողով**):

2. Սահմանել, որ՝

2.1. ***թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի նոյեմբերի 24-ից (սույն որոշման հրապարակման օրվանից) և ավարտվում է 2016 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 18:00-ին.***

2.2. ***թեկնածուների համակարգչային հմտությունների ստուգման և գրանցման աշխատանքները կատարվում են մինչև 2016 թվականի դեկտեմբերի 5-ը (ներառյալ).***

2.3. ***քարոզչությունը սկսվում է 2016 թվականի դեկտեմբերի 8-ից և ավարտվում է 2016 թվականի դեկտեմբերի 12-ին.***

2.4. ***2016 թվականի դեկտեմբերի 13-ը համարվում է լռության օր.***

2.5. ***ժողովի քվեարկությունը սկսվում է 2016 թվականի դեկտեմբերի 14-ին ժամը 11:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:***

24 նոյեմբերի 2016թ.
թիվ 471-Լ

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- իրազեկել Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի փաստաբաններին Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու և Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2, 4-րդ հարկ) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը փակցնելու միջոցով:
- սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին.
- մարզային հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

4. Հաստատել Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

24 նոյեմբերի 2016թ.
թիվ 471-Լ
ք. Երևան